ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

«12» հուլիսի 2013թ. N 1

«ԱՌԵՎՏՐԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 4-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ «Բ» ԿԵՏԻ ԵՎ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «Գ» ԿԵՏԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Առևտրի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի (2002 թվականի ապրիլի 30-ի ՀՕ-207, այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի համաձայն առևտրի հարկ վճարողներ չեն կարող համարվել անձինք, որոնց կողմից նախորդ տարվա ընթացքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն «ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված և չիրացված այնպիսի ապրանքների մնացորդը, որոնց ներմուծման համար մաքսատուրքի դրույքաչափը սահմանված է 0 տոկոս, ենթակա չեն ակցիզային հարկով հարկման և որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում, գերազանցում է 1 000 000 ՀՀ դրամը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն առևտրի հարկ վճարողը դադարում է համարվել այդպիսին, եթե եռամսյակի ընթացքում նրա կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն «ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված այնպիսի ապրանքների ներմուծման ծավալը, որոնց ներմուծման համար մաքսատուրքի դրույքաչափը սահմանված է 0 տոկոս, ենթակա չեն ակցիզային հարկով հարկման և որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում, գերազանցում է 250 000 ՀՀ դրամը:

Նշված դրույթների կիրառման հետ կապված հարցերի ճշտման նպատակով՝ ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով՝

պաշտոնապես պարզաբանում եմ.

1. Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի և 6-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի դրույթները չեն կիրառվում, եթե առևտրի հարկ վճարողը միաժամանակ իրականացնում է հարկման ընդհանուր համակարգով հարկվող գործունեություն և նրա կողմից ներ են մուծվել առևտրական գործունեության հետ կապ չունեցող ապրանքներ՝ հիմնական միջոցներ, հումք և նյութեր:

2. Հարկման ընդհանուր համակարգով հարկվող գործունեության մասով մուտքագրված հիմնական միջոցները, հումքը և նյութերը հետագայում իրացվելիս դրանց շրջանառությունը հարկվում է հարկման ընդհանուր համակարգով:

Հ/Ծ 1-ԻՆ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ Ա. ԲԱԼԱՅԱՆ